հատին վճիռ 'ի վերայ իւրեանց, ոչ Շնորհ իշխանէ, ոչ Օգնութիւն 'ի կարևորացէ, ոչ ողորմութիւն 'ի առատասրտէ և այլն, հարկաւորացան եթէ ոչ բոլորովին հարկ և ընդունելութիւն ընտրեալ 'ի միջէ նոցայ 'ի ժամանակի հանդարտ բնութենէ և խոնարհ և սուրբ սրտէ գոհացեալ յօրինաց այսու բաւականացան, և բարձաւ նախանձ, մնափառութիւնք, պարծանք, հպարտութիւնք, նեղութիւն և այլն 'ի միջէ նոցայ, քանզի զամենայն զոր ինչ որ եկն և գալոց էր 'ի վերայ իւրեանց զիւրեանք ընտրեցին և յանձն առին զի կատարեսցի 'ի վերայ գործոց ձեռաց իւրեանց, այսպէս կալով մնացին ժամանակ ընդ ժամանակս երջանիկս թողուլով բազում բարի նշաւակս 'ի վերայ աշխարհի, որպէս այժմոյս մեզ որում ցանկամք և ամենայն զօրութենէ փափագիմք զի իջցէ զօրութիւն հոգւոյ հռոմէացւոց 'ի վերայ հոգոյ Հայոց (բայց հեթանոսութեան հաւատոյ.) և եթէ մեք գտցուք մասն մի 'ի երկայնամտութենէ խորհրդեան և գործոյ հռոմայեցւոց հաստատելոյ վասն մեր Օրինաց, որպէս հաստատեցին հռոմէացիք վասն իւրեանց, Ես ոչ երկբայիմ որ երջանկութիւն մեր գտցի նոյն որպէս գտան հռոմայեցիք։

Այս անցք մեծ և վկայ հաստատուն և նշաւակ յայտնի գործս հռոմէացւոց որ մինչ սիրով և հաւատարմութեամբ արիացեալ գօտի ընդ մէջս